# «Սազատի Ֆիշ» ՍՊ ընկերության կողմից Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Սիփանիկ բնակավայրի տարածքում գործող ձկնաբուծարանի արտադրական հզորությունների ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

/լրամշակված/

Պատվիրատու՝

«Սազատի Ֆիշ» ՍՊԸ տնօրեն՝ Տ. Թադևոսյան

Կատարող՝

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն.....3

1.2 Հապավումներ.....3

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը.....6

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).....7

*1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր*.....7

*1.4.2 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում*.....11

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....12

2.1 ՖԻԶԻԿԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....12

2.2 ԿԼԻՄԱՆ.....13

2.3 Օդային ավազան.....17

2.4 Ջրային ռեսուրսներ.....17

2.5 Հողերի նկարագիրը.....19

2.6 Բուսական և կենդանական աշխարհը.....19

2.6.1 Բուսական աշխարհը.....19

2.6.2 Կենդանական աշխարհ.....20

2.7 Թափոնների կառավարում.....21

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....22

3.1 ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ – ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՒՄ.....22

3.2 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....22

3.2.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....22

3.2.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....23

3.2.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....23

3.2.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ.....23

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....24

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....25

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....26

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....25

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....26

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

| | |
|---|---|
| 1.2 Ձեռնարկող՝ | «Սազատի Ֆիշ» ՍՊԸ |
| 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ | Մասիս, գ. Սիփանիկ |
| 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ | Մասիս, Սիփանիկ բնակավայր և Սիփանիկ բնակավայր, 20-րդ փողոց 1-ին նրբանցք 3 |
| 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ | Արարատի մարզ, Սիփանիկ խոշորացված համայնք |

## 1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

**Իրավական հիմքերը**

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),

2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),

3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),

4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),

5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),

6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),

7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),

8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”

11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման։

16. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

17. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

18. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

19. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

20. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

21. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,

22. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

23. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը։

24. ՀՀ կառավարության 22.05.03թ. «Ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին» N 703-Ն որոշում։

25. 2022 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն օրենք։

26. ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հուլիսի 27-ի N 262-Ա հրաման

## 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

**«Սագատի Ֆիշ» ՍՊԸ** ընկերությունը Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Սիփանիկ բնակավայրի տարածքում իրականացնում է ձկնաբուծական գործունեություն: Ընկերությունը մտադիր է ընդլայնել արտադրական ծավալները, հասցնելով 650 տ/տարի:

**Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքում առկա է՝**

- ձկնաճեցման լճակ՝ 13329.36քմ,
- պահեստ՝ 120.33քմ,
- ենթակայան՝ 17.39քմ

**Վարձակալական հիմունքներով հողատարածքում առկա են՝**

- ձկնաճեցման լճեր՝ 1262.7քմ
- վարչական շենքից մաս ՝ 1314.15քմ

Ընկերության տարածքում նոր կառուցապատում չի նախատեսվում:

Ձկնաբուծարանի մոտակայքում բնակելի տներ և շինություններ չկան:

Ընկերության ջրօգտագործումն իրականացվում է 04.05.2023թ. N0113-23 1-2-Ջ/Կ-Ս-Ե/Վ Ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան՝ 5 գործող խորքային հորերից, 77765.0 խմ/օր / կամ 900.0լ/վրկ ծախսով/: Լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է դրենաժային համակարգ՝ Հրազդան գետ:

Ջրառի և ջրահեռացման կետեր

9. Ջրառի և ջրահեռացման կոորդինատական կետերն են.

Ջրառ՝
X = 44° 20' 35.1" Y = 40° 04' 04.5"
X = 44° 20' 45.6" Y = 40° 04' 03.6"
X = 44° 20' 41.6" Y = 40° 04' 04.8"
X = 44° 20' 45.7" Y = 40° 04' 08.3"
X = 44° 20' 40.8" Y = 40° 04' 08.7"

Ջրահեռացում՝
X = 44° 20' 34.5" Y = 40° 04' 04.7"

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ձկնաբուծարանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

## 1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

### *1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր*

**«Սազատի Ֆիշ» ՍՊ** ընկերությունը Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Սիփանիկ բնակավայրի տարածքում իրականացնում է ձկնաբուծական գործունեություն:

Գործունեության հասցը՝ Մասիս, Սիփանիկ բնակավայր և Սիփանիկ բնակավայր, 20-րդ փողոց 1-ին նրբանցք 3:

Ընկերությունը մեծացնում է արտադրական ծավալները համապատասխանեցնելով 04.05.2023թ. N0113-23 1-2-Ջ/Կ-Ս-Ե/Վ Ջրօգտագործման թույլտվության պայմաններին և ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս

կազմող պայմանների 3 և 4-րդ կետերին: Ընկերությունը գործունեությունը սկսել է 2012թ-ից տարեկան 50տ արտադրողականությամբ, աստիճանաբար ընդլայնվելով և ավելացնելով արտադրողականությունը, ներկայումս ընկերության արտադրողականությունը կազմում է 650 տ կախված պահանջարկից:

Տարածքը իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք :

Ընկերությունը զբաղվում է ծիածանային իշխան ձկան աճեցմամբ: Ջրավազանների համար ջրառն իրականացվում է 5 խորքային հորից: Ձկնաբուծական լճակներից արտահոսքը առանց մաքրման լցվում է դրենաժային համակարգ՝ Հրազդան գետ (ամրագրված է ջրօգտագործման թույլտվությամբ):

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված Ջրօգտագործման թույլտվության, ձկնաբուծական գործունեության հաստատված թույլատրելի արտահոսքը և կեղտաջրերի կազմը հետևյալն է:

| N | Նյութերի անվանումը | Փաստացի կոնցենտրացիա գ/մ³ | Փաստացի արտահոսք գ/ժամ | Սահմանային թույլատրելի արտահոսք գ/մ³ | Հաստատված ՍԹԱ գ/ժամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ԹԿՊ5 | 2.50 | 7290.5 | 2.50 | 7290.5 |
| 2 | ԹՔՊ | 15.35 | 44763.7 | 15.35 | 44763.7 |
| 3 | Կախված մասնիկներ | 23.30 | 67947.5 | 23.30 | 67947.5 |
| 4 | Քլորիդներ | 30.45 | 88798.3 | 30.45 | 88798.3 |
| 5 | Սուլֆատներ | 32.23 | 93989.1 | 32.23 | 93989.1 |

Ընկերությունը փակ շինության մեջ ունի մանրաձկան տնտեսություն, որտեղ իրականացնում է կենսական ցիկլերի ամբողջական ապահովումը՝ մայրական վտառի կազմավորումը, շարունակական ապահովումը, զարգացումը, սելեկցիան, ինկուբացիան, թրթուրի և մանրաձկան աճեցումը, կենսունակ մանրաձկան տեղափոխումը լճակներ:

Մանրաձկից մինչև ապրանքային ձկան աճեցման ցիկլը տևում է մոտ 1 տարի: Իշխան ձկան հաշվարկով մեկ ձկան համար մինչև 1կգ աճեցնելու համար կպահանջվի 1.8 կգ կեր: Ընկերության տարեկան արտադրողականությունը կհասնի 650 տ իշխան տարեկան: Անհրաժեշտ կերը մատակարարվում է Եղվարդի կերերի գործարանից և պահեստավորվում պահեստային տնտեսությունում, որտեղից չափաբաժիններով տրվում է լճակներ:

Լճակների վրա տեղադրված են աէռատորներ ջուրը անհրաժեշտ թթվածնով հագեցնելու համար:

Իրադրային հատակագիծ




Պահեստային և
վարչական
մասնաշենք
Ավազաններ
Image © 2023 Airbus
Google Earth

### *1.4.2 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում*

Աշխատողների սանիտարա-կենցաղային կարիքների համար անհրաժեշտ թարմ ջրի ծախսի տարեկան ծավալը կկազմի

a) **կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

b) **$W_{ë.ï.}$ = ($n$ x $N$ + $n_1$ x $N_1$) x $T$,** որտեղ

c) **n –** ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

d) **N–** ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 $մ^3$օր/մարդ

e) **$n_1$–** սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 6 մարդ

f) **$N_1$** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝ 0.025 $մ^3$օր/մարդ

g) **T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 365 օր

h) **$W_{խ.տ.}$**= (2 x 0.016 + 6 x 0.025) x 365 = 66.43 խմ/շին. ժամ.:

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 66.43 խմ/շին.ժամ:**

Ընկերությունում խմելու և կոմունալ-կենցաղային ջուրը մատակարարվում է ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Ընկերությունը հանդիսանում է <<ՀԷՑ>> բաժանորդ էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն պայմանագրի (Պայմանագիրը կցվում է):

Տարածքում գազաֆիկացում չի նախատեսվում, ջեռուցման համար կօգտագործվեն էլեկտրական սարքեր:

## 2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

### 2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սիփանիկ վարչական շրջանը գտնվում է Արարատի մարզի Մասիսի խոշորացված համայնքի տարածքում: Հեռավորությունը մարզկենտրոն Արտաշատից կազմում է 23կմ: Գյուղը տեղադրված է Արարատյան դաշտում, Հրազդան գետի ձախափնյա հովտում: Ծովի մակարդակից ունի 828 մ բարձրություն:

**Երկրաբանություն.** Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

**Բնության հուշարձաններ**

Արարատի մարզի բնության հուշարձանների ցանկ՝ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման

| | | |
|---|---|---|
| | «Անձավիկ» քարանձավ | Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա |
| | «Դաշտաքար» քարանձավ | Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա |
| | «Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ» | Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա |
| | «Անանուն» շերտավոր նստվածքներ | Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա |
| | «Անանուն» անտիկլինալ ծալք | Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| | «Անանուն» ծալքավոր ստրուկտուրա | Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| | «Անանուն» ծալքագոյացման մերկացում | Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին |

| | | |
|---|---|---|
| | «Հորթունի» բրաձո ֆլորա | Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ |
| | «Ջերմանիսի» բրաձո ֆլորա | Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի |
| | «Վեդի գետի ավազանի» բրաձո ֆաունա | Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ |

Ձկնաբուծարանի գործունեության ընթացքում բնության հուշարձանների վրա ազդեցություն չի ակնկալվում, այդ պատճառով պահպանությանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվել: Սիփանիկ համայնքում բնության հուշարձանները բացակայում են:

## 2.2 ԿԼԻՄԱՆ

Մասիս համայնքը գտնվում է Արարատյան դաշտավայրում:

Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +40$^0$C, իսկ ձմռանը՝ -10$^0$C): Տարեկան միջին ջերմաստիճանը +16$^0$C է:

Ձմռան սկիզբը տարածքում հանդիսանում է դեկտեմբեր ամսվա երկրորդ կեսը, իսկ վերջը՝ փետրվար ամսվա երկրորդ կեսը: Օդի միջին ամսական ջերմաստիճանը հունվար ամսին տատանվում է 4.4$^0$C-ից մինչև -12.2$^0$C:

Գարունը երկարատև չէ, փետրվար ամսվա երկրորդ կեսից մինչև մայիս ամսվա առաջին կեսը, խոնավ, եղանակի հաճախակի փոփոխություններով: Միջին ամսական ջերմաստիճանը այդ ժամանակահատվածում փոփոխվում է -2.5$^0$C-ից մինչև 12-17$^0$C:

Ամռան սկիզբը ընդունվում է մայիս ամսվա երկրորդ կեսը, իսկ ավարտը՝ հոկտեմբեր ամսվա առաջին կեսը: Միջին ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին տատանվում է 20-25°C-ի սահմաններում: Համատարած դիտվում է լեռնա-դաշտային քամիների ուժեղացում:

Աշունը տարբերվում է արևային չոր եղանակով՝ ընդհուպ մինչև դեկտեմբեր ամսվա երկրորդ կեսը:

Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ: Անսառնամանիք օրերի թիվը՝ 120-200օր:

Օդի միջին բացարձակ խոնավությունը Արտաշատի շրջանում տատանվում է 3.9-15.4մմ, միջին հարաբերական խոնավությունը տատանվում է 52-82%:

Տարածաշրջանին բնորոշ են տեղային լեռնա-դաշտային քամիներ, որոնք դիտվում են ամռան օրվա երկրորդ կեսին: Քամիների միջին ամսական արագությունը հասնում է մինչև 1.6մ/վրկ, իսկ առավելագույնը՝ 15-20մ/վրկ:

Տարածաշրջանը հիմնականում գյուղատնտեսական է՝ զարգացած խաղողագործությամբ, այգեգործությամբ և բանջարաբուծությամբ:

### Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը օդերևութաբանական կայանի տվյալներով

| Օդերևութա-բանական կայան | Օդերևութա-բանական կայանի բարձրությունը, մ | Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C⁰ | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Բացարձակ նվազագույն | Բացարձակ առավելագույն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | |
| Արտաշատ | 829 | -3.6 | -0.9 | 5.6 | 12.7 | 17.5 | 21.5 | 25.3 | 24.8 | 19.8 | 13,0 | 6.0 | -0.6 | 11.8 | -29 | 43 |

### Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը օդերևութաբանական կայանի տվյալներով

| Օդերևութա-բանական կայան | Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, % | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Միջին ամսական ժ. 15-ին | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | հունվարին | օգոստոսին |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | |
| Արտաշատ | 78 | 73 | 63 | 58 | 59 | 54 | 51 | 52 | 57 | 68 | 73 | 79 | 64 | 64 | 32 |
| | | | | | | | | | | | | | | | |

### Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները օդերևութաբանական կայանի տվյալներով

| Բնակավայրի անվանումը | Տեղումների Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | Տարեկան | Ձնածածկույթ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ըստ ամիսների | | | | | | | | | | | | | **Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ** | **Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը** | **Ձյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ** |
| | 18 | 18 | 27 | 36 | 40 | 25 | 11 | 6 | 10 | 22 | 24 | 17 | 254 | | | |
| Արտաշատ | 18 | 20 | 32 | 36 | 43 | 34 | 27 | 22 | 28 | 36 | 31 | 25 | 43 | 40 | 36 | 46 |

Աղյուսակ 2.4 Քամի

| Բնակավայր, օդերևույթաբանական կայանի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա) | Ամիսներ | Կրկնելիությունը, % ըստ ուղությունների / Միջին արագություն, մ/վ | | | | | | | | Անհողմությունների | Միջին ամսական | Միջին տարեկան | Ուժեղ քամիներով | Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հյուսիսայն (Հս) | Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ) | Արևելյան (Արլ) | Հարավ-Արևելյան (ՀվԱրմ) | Հարավ (Ավ) | Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ) | Արևմտյան (Արմ) | Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ) | | | | | 20 | 50 | 100 |
| Արտաշատ | 920.2 | հունվար | 7 | 8 | 10 | 20 | 12 | 10 | 15 | 18 | 88 | 0.3 | 0.4 | 7 | 21 | 24 | 26 |
| | | | 1,7 | 1,7 | 2.7 | 3.1 | 2.4 | 2.0 | 2.2 | 1.7 | | | | | | | |
| | | ապրիլ | 4 | 9 | 12 | 27 | 13 | 8 | 13 | 14 | 74 | 0.6 | | | | | |
| | | | 1.7 | 1.8 | 2,1 | 2.8 | 2.5 | 2.8 | 2.8 | 2,6 | | | | | | | |
| | | հուլիս | 8 | 7 | 9 | 16 | 9 | 9 | 18 | 24 | 80 | 0.4 | | | | | |
| | | | 1.7 | 1.9 | 1,7 | 2.0 | 2.0 | 2.0 | 2,7 | 2,3 | | | | | | | |
| | | հոկտեմբեր | 7 | 12 | 12 | 19 | 8 | 10 | 16 | 16 | 85 | 0.3 | | | | | |
| | | | 1.6 | 1,5 | 2,1 | 2.0 | 1.5 | 2.1 | 2.4 | 2,0 | | | | | | | |

### 2.3 Օդային ավազան

Սիս համայնքի մթնոլորտային օդի վրա ազդեցություն կարող են ունենալ հիմնականում ավտոմայրուղու տրանսպորտային միջոցների արտանետումները:

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է “Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Սիս համայնքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ հրապարակված տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար “Էկոմոնիթորինգ”-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց[1]: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Սիսը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են[2]

- Փոշի՝ 0.2 մգ/մ$^3$;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ$^3$;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ$^3$;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ$^3$:

### 2.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է <<Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից:

Սիս համայնքը գտնվում է Հրազդան գետի ջրահավաք ավազանում՝ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում: Տարածքում առկա են ՝ Վեդի և Ազատ գետերը:

Գետերի մեջ հարակից համայնքների տարածքներում թափվում են տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը, ինչը հանդիսանում է գետերի աղտոտվածության հիմնական աղբյուրը:

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորնգի կենտրոն” ՊՈԱԿ 2021թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների:




Գետերը դասվում են “միջակ” (Վեդի, Ազատ) և “վատ” (Հրազդան) կարգավիճակի դասին:

Արարատյան արտեզյան ավազանում առանձնացվում են 3 ջրատար շերտ, որոնք միմյանցից մեկուսացված են որոշակի երկրաբանական պայմաններով: Ամենախորը՝ երրորդ հորիզոնն է, որն ընկած է 90-400 մետր խորության վրա: Երկրորդ հորիզոնն ընկած է 30-70 մետր խորության վրա, իսկ առաջինը՝ 20-30 մետր խորության վրա:

### 2.5 Հողերի նկարագիրը

*Հողերը*

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

### 2.6 Բուսական և կենդանական աշխարհը

ՀՀ Արարատի մարզի տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

**Կենսաբանական ռեսուրսներ**: Կիսաանապատային գոտու կենսառեսուրսները աչքի չեն ընկնում իրենց բազմազանությամբ, սակայն կերհանդակները ներկայացված են օշինդրային, օշինդրա-էֆեմերային, օշինդրա-հացազգային, օշինդրա-օշանային և օշանայինբուսական համակեցություններով: Ուտելի և համեմունքային բույսերից կարելի է նշել բոխին, շրեշը, շուշանը, ղանձիլը: Եթերայուղատու բույսերից են ուրցը, անթառամը, օշինդրը: Բնական խեժով հարուստ են հատկապես տրագականտային գազերը: Որսի օբյեկտ են համարվում լորը, քարիկաքավը, մի շարք ջրլողթռչուններ /սևփարփար, մեծուզակ, փոքրսուզակ, կռնչանբադ, մոխրագույն բադ և այլն:

Մարզի բուսականության առավել տարածված տեսակներից են կիսաանապատային, տափաստանային տեսակները, որոնք զբաղեցնում են տարածքի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերը:

Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

#### 2.6.1 Բուսական աշխարհը

Անապատային չորասեր բուսականության բնորոշ բուսատեսակներից են շորան, բալախը, սարսազան որոնք դիմանում են աղակալմանը: Քաղաքի հարավային մասում գերակշռում է հալոֆիտային, հալոքսեռոֆիտանապատային բուսականությունը - Salsola eticoides, S. dendroides, S.nitraria, Haiocnemumstrobilaceum: Արևելքում օշինդրա-էֆեմերային կիսաանապատային բուսականության գերակշռությամբ - Artemisia fragrans,

Kochiaprostrata, Capparis herbacea, Ceratoides papposa, Atraphaxi sspinosa, Rhamnus paiiasii, Tanacetum argyrophyllum, Poa bulbosa, տեսակներ - Bromus, Aegilops, Eremopyrum, Alyssum: Կիսաանապատային գոտու համար բնորոշ բուսատեսակներից են օշինդր բուրավետը, Օշան գորշ, Օշան հավամրգանման, գեղածնկիկ մատիտեղանման, լերդախոտ ալեհեր, ավելաբույսգետնատարած: Հազվագյուտ և անհետացող զիպտոֆիտ անապատային բուսական ֆորմացիաներ Cephalorrhynchustakhtadzhianii, Zygophyllumatriplicoides:

Մարզի էնդեմիկ տեսակներն են կտավատազգիներ (Linaceae), մեխակազգիներ (Caryophyllaceae):

Մարզի տարածքում հանդիպող և անհետացող բուսական տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 72-Ն որոշումից:

### 2.6.2 Կենդանական աշխարհ

Տարածքը հարուստ է կիսաանապատային գոտուն բնորոշ սողուններով, ինչպիսին են միջերկրածովային կրիան /Testudograeca/, բարեկազմ օձ ազլուխ մողեսը /Ophisopselegans/, Շտրաուխի /Eremiasstrauchi/ և Անդրկովկասյան /E. pleskei/ մողեսիկները, Անդրկովկասիան թաքիրային կլորագլուխը /Phrynocephalushelioscopuspersicus/, մողեսաօձը /Malpolonmonspessulannus/, վզնոցավոր /Eireniscollaris / և Հայկական /E. punctatolineatus / էյրենիսները, կարմրափոր սահնօձը կամշահմարը / Coluberschmidti/ և կապարագույն սահնօձը /C. nummifer/, Անդրկովկասյան գյուրզան /Viperalebetina/: Կրծողներից – սովորական /Microtusarvalis/ և հասարակական /M. socialis/ դաշտամկները, հարավային /Merionesmeridianus/, փոքրասիական /M. blackleri/ և Վինոգրադովի / M. vinogradovi / ավազամկները: Կատվազգիներից - եղեգնակատուն /Felischaus/: Ջրաճահճային էկոհամակարգերում հանդիպում են Կասպիական կրիան/Mauremiscaspica/ և լճագորտը/Ranaridibunda/:

Նշված համայնքային տարածքներում հանդիպում են ամենուր ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակ դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Կենդանիների էնդեմիկ տեսակներն են՝ Կովկասյան փառավոն (Pharaonus caucasicu):

Տարածքում հանդիպում են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները՝ խայտաբադ, մարգագետնային ծիծառակտցար, վարդագույն հավալուսն, դալի ավազամուկ, սևծովյան ճպուռ, կովկասյան բնդեռիկ:

Անմիջապես ձկնաբուծարանի համար նախատեսված տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներ չկան:

### 2.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Արարատի մարզի Սիփանիկ բնակավայրին մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքն է Խոսրովի անտառ արգելոցը:

<u>Խոսրովի անտառ արգելոց</u>

Խոսրովի անտառ արգելոցը կազմավորվել է 1958-ին (տարածքը՝ 23213.5 հա), Հայաստանի Արարատի մարզում՝ Գեղամա լեռնավահանի հարավարևմտյան՝ Ուրծի, Դահնակի, Երանոսի լեռնաշղթաների, Իրից, Խոսրովասար լեռների լանջերին՝ Ազատ և Վեդի գետերի ավազաններում՝ ծովի մակարդակից 700-2800 մ բարձրություններում՝ Ազատ գետի ջրային պաշարների, գիհուտների, կաղնուտների, լեռնաչորասեր բուսականության, հազվագյուտ կենդանիների ու բույսերի պահպանության նպատակով:

Ձկնաբուծարանի գործունեության ընթացքում բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցություն չի ակնկալվում, այդ պատճառով պահպանությանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվել:

### 2.8 Թափոնների կառավարում

<u>Շահագործման փուլ</u>

Ձկնարդյունաբերական կազմակերպություններում առաջացող թափոնների կառավարումն իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հուլիսի 27-ի N 262-Լ հրամանով հաստատված ուղեցույցի պահանջներով:

Ձկնարդյունաբերական կազմակերպություններում կարող են գոյանալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրամանով հաստատված ցանկում ներառված հետևյալ թափոնատեսակները.

1) կենցաղային աղբ /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 1.5 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մոտակա աղբավայր,

2) «Սննդամթերքի արտադրության հոսքաջրերի նստվածք» թափոնատեսակի ծածկագիրը՝ 11139030 02 00 4, մոտավոր քանակը տարեկան 100 կգ:

Ձկնաբուծության համար նախատեսված ջրավազաններում գոյացող թափոնը՝ կերի ավելցուկից և ձկան արտաթորանքների պինդ զանգվածից գոյացող նստվածքը,

համապատասխան մշակումից հետո կարող է ծառայել որպես բարձրարժեք պարարտանյութ:

# 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## 3.1 ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ – ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՒՄ

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արտադրված ձկան ամեն տոննայի դիմաց շրջակա միջավայր է արտանետվում 132 կգ ազոտ և 25 կգ ֆոսֆոր:

Ձկնաբուծարանից  չյուրացված կերը և ձկների չվերամշակված արտաթորանքներն ուղղակիորեն նետվում են շրջակա միջավայր և սննդարար տարրերի լրացուցիչ աղբյուր հանդիսանում: Թափոնների քանակը կախված է կերի բաղադրությունից, կերակրման ռեժիմից, կերի քանակից, կերի յուրացման չափից, ջրի մեջ կերի և արտաթորանքների կայունությունից, ջրի ջերմաստիճանից:

Մեղմացնող միջոցառումները ենթադրում են այնպիսի կերաբախշման համակարգեր, որոնք առավելագույնի կհասցնեն կերային գործակիցը և նվազագույնի՝ թափոնների գոյացումը: Ձկնակերի բաղադրության օպտիմիզացումը և ձկնակերի յուրացման աստիճանի բարձրացումը, ինչպես նաև կերի բախշման տեխնոլոգիայի բարելավումը:

Քանի որ գոյություն ունեցող ընդլայնման արդյունքում  նախատեսվող լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է Հրազդան գետ այնտեղ խառնման արդյունքում տեղի է ունենում ջրում պարունակվող օրգանական միացությունների  նոսրացում:

## 3.2 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 3.2.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Ընկերության գործունեության ընթացքում օդային ավազան արտանետումներ չեն առաջանում:

### 3.2.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրառի բոլոր կետերն ապահովել տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ սարքերով և տեղեկացնել շրջակա միջավայրի նախարարությանը դրանք կնքելու համար,
- հետագայում ներդնել ջրի փակ շրջանառու համակարգ:

### 3.2.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Ընկերության տարածքը արդեն իսկ կառուցապատված է ՝ հողային նոր աշխատանքներ չի նախատեսվում:

### 3.2.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Գործունեության ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-

արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Ընկերությունում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

## 4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Ձկնաբուծարանի շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Վերահսկել կերաբախշման համակարգը
2. Ներդնել այնպիսի կերաբաշխման համակարգ որը առավելագույնի կհասցնի կերային գործակիցը և նվազագույնի՝ թափոնների գոյացումը: Ընկերությունը իր աշխատանքային փորձից ելնելով կերի քանակության բաշխումը իրականացնում է այնպես, որ չառաջանա ավելցուկ և լրացուցիչ թափոնների գոյացում:
3. Ձկնակերի բաղադրության օպտիմիզացումը և ձկնակերի յուրացման աստիճանի բարձրացումը, ինչպես նաև կերի բախշման տեխնոլոգիայի բարելավումը:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 750000 դրամ:

| Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շահագործման փուլ | |
|---|---|
| Ջրի անալիզների իրականացում ջրառի կետում | եռամսյակ |
| Ջրի անալիզների իրականացում լճակներում | եռամսյակ |
| Ջրի անալիզների իրականացում Դրենաժի թափման կետում | եռամսյակ |
| Ջրի անալիզի իրականացում դրենաժի թափման կետից հոսքն ի վար 100մ | եռամսյակ |

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՊԱՐԱՄԵՏՐԵՐ | ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ |
|---|---|---|
| Անասնակերի պահում | | • Անասնակերը պետք է պահվի համակցված կեր ձկների համար տեխնիկական պայմանով սահմանված պահանջներով: |
| Ջրային ռեսուրսներ | | • ջրառի բոլոր կետերն ապահովել տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ սարքերով:<br>• դրանք կապարակնքել,<br>• հետագայում ներդնել ջրի փակ շրջանառու համակարգ:<br>• Ջրի որակի վերահսկողություն |

## ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

| Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Որտեղ իրականացնել | Ինչպես իրականացնել | Ժամանակամիջոց | Կատարող |
|---|---|---|---|---|---|
| Կենցաղային աղբի առաջացում | - Աղբամանների տեղադրում<br>- համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ | Ընկերության տարածք | Արտաքին զննում | Գործունեության ողջ ընթացքում | Կապալառու, համայնքի վերահսկողություն |
| Աշխատանքի անվտանգություն | - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով | Արտադրահրապարակ | Ստուգման գործընթացներ | Աշխատանքների ողջ ընթացքում | Ընկերություն |
| Կանաչապատում | Կանաչ տարածքների մոնիթորինգ | Սեփական տարածք | Արտաքին զննում | մշտական | Ընկերություն |

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.

2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.

3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 19 դեկտեմբերի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍԱԳԱՏԻ ՖԻՇ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Սիփանիկ 20-րդ փողոց 1-ին նրբանցք 3

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի մասի առուվաճառքի պայմանագիր կնքված 17.08.2021թ. գ/մ 17113:, Համայնքի ավագանու 26.08.2021թ. թիվ 21 որոշում, Ճարտարապետահատակագծային առաջադրանք թիվ 07, 10.09.2021թ, Ճարտարապետաշինարարական նախագիծ 05.10.2021.թ, Կառուցման թույլտվության մասին որոշում եւ թույլտվություն 05.10.2021.թ h 03, Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ 08.12.2022.թ h 210

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-085-0028-0100
Մակերեսի չափը (հա)՝ 3.6637
Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 19122022-03-0042, գաղտնաբառ՝ DLGGISB7SDRQ**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 03-085-0028-0100-003 | Ձկնաճեցման լճակ | 13329.36 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 2 | 03-085-0028-0100-001 | Պահեստ | 120.33 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 3 | 03-085-0028-0100-002 | Ենթակայան | 17.39 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 19122022-03-0042, գաղտնաբառ՝ DLGGISB7SDRQ**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

**Նոտարական ակտի կոդ:** 551-20171003-37-1789465
**Նոտարական ակտի գաղտնագիր:** QNOLRZ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան
երկու հազար տասնյոթ թվականի հոկտեմբերի երեքին

Մի կողմից, **«ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,**
գտնվելուվայրը՝Հայաստան 0812 Արարատ գ. Սիփանիկ,
գրանցմանհամար՝ 77.110.22174,
ՀՎՀՀ՝ 03812122,
**ի դեմս տնօրեն՝ՏԻԳՐԱՆ ՏԱՐԻԵԼԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**
որի կողմից որպես լիազորված անձ, համաձայն լիազորագրի, տրված երկու հազար տասնյոթ թվականի հոկտեմբերի երկուսին գործում է
քաղաքացի՝ **ՍԵՐԳԵՅ ԱՐԿԱԴԻԻ ԱՍՐԻՅԱՆԸ,**
ծնված՝ 24/08/1978թ-ին,
ՀԾՀ՝ 3408780226,
անձնագիր՝ AR0270133, տրված՝ 044-իկողմից, 20/04/2017թ-ին,
հաշվառված՝ԱՐԱՐԱՏ, ՌԱՆՉՊԱՐ, 7 Փ. 3 ՆՐԲ., 1 Տ
այսուհետ՝ **«վարձատու»**

և մյուս կողմից, **«ՍԱԳԱՏԻ ՖԻՇ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,**
գտնվելուվայրը՝Հայաստան 0812 Արարատ գ. Սիփանիկ,
գրանցմանհամար՝ 77.110.64490,
ՀՎՀՀ՝ 03812527,
ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ **ՏԱԹԵՎԻԿ ՎԱՀԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ,**
ծնված՝ 21/09/1979թ-ին,
ՀԾՀ՝ 7109790533,
անձնագիր՝ AM0232072, տրված՝ 009-իկողմից, 14/03/2011թ-ին,
հաշվառված՝ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ Փ., 19/1 Շ, 36ԲՆ,
այսուհետ՝ **«վարձակալ»,**

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

7.6.Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է Հայաստանի Հանրապետության "Էրեբունու" նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ Գույքի Կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում գրանցելու համար:
7.7.Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարում են, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
7.8.Պայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և

պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:

7.9.Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

8. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձատու՝ «ՋԻՏԻԵՍ-ԻՄՄՕ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից

լիազորված անձ՝ ----------------------------------------------------

վարձակալ՝ «ՍԱԳԱՏԻ ՖԻԾ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

----------------------------------------------------

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան,
երկու հազար տասնյոթ թվականի հոկտեմբերի երեքին,
սույն պայմանագիրը վավերացված է իմ Հայաստանի Հանրապետության "Էրեբունու" նոտարական տարածքի նոտար՝ Մարինե Սարգսյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, ներկայացուցիչների լիազորությունները, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ վարձատուի իրավունքները ստուգված են: Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30/երեսուն/աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 4629 ով:

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Մարինե Սարգսյան

«ԶԻՏԻԼ ԽՍՍՕ» ՍՊԸ
(Անուն, ազգանուն, հայրանուն կամ կազմակերպության անվանումը)

Հաստատում եմ
__________ համայնքի ղեկավար
«___» ________ 20__ թ.

ԱՐԱՐԱՏ (Մարզ) | գ. Սիփանիկ (համայնքը) | 20/1 փողոց 1 շենք (հասցեն)

Մասշտաբ 1: 2000




| ՀՈՂԱՄԱՍԻ | | Բեկման կետեր | X | Y | Չափը /մ/ | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անունը, ազգանունը (անվանումը) |
|---|---|---|---|---|---|---|
| Մակերեսը (հա) | 0.49 | 1 | 8444023.7860 | 4437402.8182 | 56.13 | |
| Ծածկագիրը | 028-045 | 2 | 8444035.4968 | 4437457.7125 | 10.66 | |
| Նպատակային նշանակությունը | ջրային | 3 | 8444044.6652 | 4437452.2800 | 30.80 | |
| Գործառնական նշանակությունը | ջրային | 4 | 8444038.2391 | 4437422.1579 | 90.00 | |
| Հողամասը ծանրաբեռնված է | շենք, շինություն | 5 | 8444126.2585 | 4437403.3806 | 22.00 | |
| | | 6 | 8444121.6684 | 4437381.8645 | 100.1 | |
| | | 1 | 8444023.7860 | 4437402.8182 | | |

ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ

| Համարը ըստ հատակագծի | Գործառնական նշանակությունը (անվանումը) | Բեկման կետեր | X | Y | Չափը /մ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ձկնաբուծական լճեր | | | | |

Կատարող Արծրունի Արամայիսի Գեղամյան (Անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը № 0175 տրման ամիս, ամսաթիվը 28.04.2012 թ.

Իրավաբանական անձի 83.132639 ԱՁ «ԱՐԾՐՈՒՆԻ ԳԵՂԱՄՅԱՆ» (Անուն, ազգանուն)

Կատարման ամսաթիվը 14.09.2017

ՎԿ. N 01-Ա 232639


«ՋԻՏԻԷՍ ԻՄՄՕ» ՍՊԸ
Անուն, ազգանուն (անվանում)
Մարզ Արարատ
համայնք գ. Սիփանիկ
Հասցե 20/1 փողոց 1 շենք
1-ին հարկ թիվ 2, 4, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13 սենյակները և աստիճանավանդակը ընդհանուր օգտագործման տարածքներ են սեփականատիրոջ և բոլոր վարձակալների համար:
1 ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔ
«ՍԱԳԱՏԻ ՖԻՇ» ՍՊԸ-ին վարձակալությամբ տրվող 1288.7 քմ մակերեսով տարածք
1-ին հարկ
H=3.50
h=3.10÷3.50
D=0.40
d=0.20
1
230.1
2
26.9
3
28.2
4
33.3
5
998.5
6
20.5
7
2.4
8
4.4
9
21.9
10
7.6
11
4.2
12
1.8
13
6.9
14
290.2
15
28.2
Արծրունի Արամայիսի Գեղամյան
№ 0175
տրման ամիս, ամսաթիվը 28.04.2012 թ.
Գրանցման վկայականի համարը
Հարկ վճարողի անձի 83.132639
ԱՁ «ԱՐԾՐՈՒՆԻ ԳԵՂԱՄՅԱՆ»
Կատարման ամսաթիվը 14.09.2017

Արարատի մարզ
Սիփանիկ համայնք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 03-085-0028-0045
Մասշտաբ 1: 1000

Կադաստրի կոմիտե




| | Կոորդինատներ | |
|---|---|---|
| | X | Y |
| 1 | 8444107.9230 | 4437387.0597 |
| 2 | 8444098.5275 | 4437390.4951 |
| 3 | 8444023.4146 | 4437418.0280 |
| 4 | 8444033.6543 | 4437446.7949 |
| 5 | 8444033.2419 | 4437447.1428 |
| 6 | 8444025.4689 | 4437453.7003 |
| 7 | 8444003.0602 | 4437461.9122 |
| 8 | 8443998.1880 | 4437463.6977 |
| 9 | 8443994.8595 | 4437464.9174 |
| 10 | 8443990.4559 | 4437466.5312 |
| 11 | 8443979.2330 | 4437446.3561 |
| 12 | 8443961.9046 | 4437417.0870 |
| 13 | 8443975.5221 | 4437412.1490 |
| 14 | 8444006.1315 | 4437400.9319 |
| 15 | 8444016.0371 | 4437397.3018 |
| 16 | 8444091.1521 | 4437369.7747 |
| 17 | 8444100.5436 | 4437366.3281 |

սպասարկման գրասենյակ Կ.Տ

Հավելված N 1
ՀՀ Կառավարության 2003 թվականի
մարտի 7-ի N 218-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 0113-23

1 – 2 – Ջ/Կ – Ս – Ե/Կ

«ՍԱԳԱՏԻ ՖԻՇ» ՍՊԸ

(Ջրօգտագործողի անվանումը)

| | |
|---|---|
| ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ | «ՍԱԳԱՏԻ ՖԻՇ» ՍՊԸ |
| (ջրային ռեսուրսների կառավարման և | (ջրօգտագործման թույլտվություն ստացողի |
| ՆԱԽԱՐԱՐ Հ. ՍԻՄԻԴՅԱՆ | ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Տ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ |
| պահպանության մարմնի ղեկավար) | պաշտոնը, ստորագրությունը,) |
| ստորագրությունը, անունը, ազգանունը | անունը, ազգանունը |

Կ.Տ

Տրված է 04 05 2023 թ. Ուժի մեջ է մինչև 04 11 2024 թ.

Գործունեության ժամկետը երկարաձգված է մինչև ____ ________ 20 թ.

| | |
|---|---|
| (ջրային ռեսուրսների կառավարման և | (ջրօգտագործման թույլտվություն ստացողի |
| պահպանության մարմնի ղեկավար) | պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը) |

*1. Ջրօգտագործողի հասցեն*

ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք, գ. Սիփանիկ

*(ջրօգտագործման թույլտվություն ստացողի անվանումը, (անունը, ազգանունը, հասցեն և հեռախոսը)*

հեռ. (060) 61 01 01

*2. Ջրօգտագործման վայրը* ՀՀ Արարատի մարզ

Մասիս համայնքի Սիփանիկ գյուղի վարչական տարածք

*3. Ջրառի վայրը* ՀՀ Արարատի մարզ

Մասիս համայնքի Սիփանիկ գյուղի վարչական տարածք

*4. Ջրօգտագործման նպատակը* /ձկնաբուծական/

*5. Ջրօգտագործման ծավալը, այդ թվում՝*

*ա) մակերևութային ջրային ռեսուրսներ*

Չ

*բ) ստորերկրյա ջրային ռեսուրսներ* Հինգ գործող խորքային հոր

առավելագույնը՝ 28384.240 հազ.մ³/տարի, 77765.0 մ³/օր, 900.0 լ/վ

*6.Ջրօգտագործման ժամանակահատվածը և ռեժիմը*

Տարեկան 365 օր 24 ժամյա ռեժիմով

*7. Ջրօգտագործման թույլտվության պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները ժինը*

1. Ջրօգտագործման չափաքանակի վերահսկողություն, հաշվառում և սույն ջրօգտագործման թույլտվության 5-րդ կետի բ) ենթակետով սահմանված չափաքանակների չգերազանցում:

2. Ջրօգտագործման նպատակայնություն:

3. Սույն ՋԹ-ի անբաժանելի մաս հանդիսացող պայմանների կատարում:

** Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված դեպքերում ստորերկրյա ջրերի օգտագործման համար պահանջվում է նաև ընդերքօգտագործման պայմանագիր:*

N 0113-23 04.05.2023թ.

## ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 32-ի պահանջների համաձայն մշակված սույն պայմանները ենթակա են պարտադիր կատարման: Սույն պայմանների խախտումը, համաձայն ՀՀ ջրային օրեսգրքի 30.2 հոդվածի, հիմք է ջրօգտագործման թույլտվության կասեցման համար:

1. «Սագատի Ֆիշ» ՍՊԸ-ն պարտավոր է՝

ա/ ապահովել՝ N 0113-23 ջրօգտագործման թույլտվության ստացմամբ և ջրօգտագործման իրականացմամբ պայմանավորված ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը.

բ/ արտակարգ իրավիճակներում և սակավաջրության ու երաշտի պայմաններում ապահովել շրջակա միջավայրի նախարարության պահանջները, որոնք ուղղված են հասարակական շահին և շրջակա միջավայրի պահպանմանը.

գ/ իր գործունեությամբ չնվազեցնել՝ մինչև N 0113-23 ջրօգտագործման թույլտվության ստացումը գոյություն ունեցող ավանդական ջրօգտագործողների ջրօգտագործման իրավունքները.

դ/ ապահովել պայմաններ՝ շրջակա միջավայրի նախարարության աշխատակցի կողմից ջրօգտագործման թույլտվության պայմանների կատարումը հսկելու համար.

ե/ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտացված ջրաերկրաբանական կազմակերպության միջոցով կատարել խորքային հորերի ռեժիմային դիտարկումներ և արդյունքները տարեկան մեկ անգամ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրային պետական կադաստրում գրանցման.

զ/ տարբեր պատճառներով ջրօգտագործման դադարեցման (ծավալների նվազեցման) հետևանքով խորքային հորերի չշահագործման դեպքում շրջակա միջավայրի նախարարության կողմից սահմանված ձևով և ժամկետում պահուստավորել, կոնսերվացնել (կախված հորերի շահագործական և տեխնիկական վիճակից) դրանք:

**2. Օրենքով նախատեսված լինելու դեպքում, մեկամսյա ժամկետում դիմել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման:**

3. Սույն ջրօգտագործման թույլտվությունն ուժի մեջ մտնելուց հետո N0240-21 ջրօգտագործման թույլտվությունը տրված 21.06.2021թ. այլևս չի գործում:

4. Ապահովել ՀՀ կառավարության 22.05.2003թ. «Ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին» 703-Ն որոշման կարգի 6.1 կետով սահմանված ջրօգտաջործման և ձկնարտադրության տարեկան ծավալի չափաքանակները, այն է՝

ա/ 1 լ/վ ջրաելքով իշխան ձկնատեսակի համար՝ նվազագույնը 700 կգ

բ/ 1 լ/վ ջրաելքով թառափ ձկնատեսակի համար՝ նվազագույնը 800 կգ

գ/ 1 լ/վ ջրաելքով թառափ և իշխան ձկնատեսակների համար՝ ընդհանուր նվազագույնը 750 կգ:

5. Տվյալ տարածքը սպասարկող համապատասխան ՋՕԸ-ի պահանջով ձկնաբուծական գործունեությունից առաջացող հոսքաջրերը ոռոգման նպատակով անվարձահատույց փոխանցել ՋՕԸ-ին:

6. Ապահովել ՀՀ կառավարության 14.01.10թ. «Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին» N 118-Ն որոշման պահանջները.

ա/ ջրօգտագործումն իրականացնել ջրառի կետերում հաշվառված տվյալների արխիվացման տեխնիկական հնարավորությամբ ապահովված առցանց հոսքաչափերի առկայության դեպքում,

բ/ կատարել ջրօգտագործման, ջրահեռացման և ջրային ռեսուրսների աղտոտման հաշվառման աշխատանքներ և կատարված աշխատանքների մասին տարեկան հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն՝ յուրաքանչյուր տարվա մինչև մարտի -ի 4 -ը:

7. Ջրային օրենսգրքի 33.1 հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում N 0113-23 ջրօգտագործման թույլտվությունը ենթակա է վերանայման:

8. Հայաստանի Հանրապետությունը և ջրային ռեսուրսների կառավարման ու պահպանության մարմինը սույն ջրօգտագործման թույլտվությունն ուժի մեջ մտնելուց հետո պատասխանատվություն չեն կրում ջրային ռեսուրսների նվազման հետևանքով ջրօգտագործողի կրած վնասների համար և չեն հատուցում դրանք:

| | |
|---|---|
| *ՀՀ շրջակա միջավայրի նախարար* | *«Սագատի Ֆիշ» ՍՊԸ տնօրենի ժ/պ* |
| ____________ *Հ. Սիմիդյան* | ____________ *Տ. Ծաղկույան* |
| *«04» 05 2023 թ.* | *«04» 05 2023 թ.* |

9. Ջրառի և ջրահեռացման կոորդինատական կետերն են.

Ջրառ
X = 44° 20' 35.1" Y = 40° 04' 04.5"
X = 44° 20' 45.6" Y = 40° 04' 03.6"
X = 44° 20' 41.6" Y = 40° 04' 04.8"
X = 44° 20' 45.7" Y = 40° 04' 08.3"
X = 44° 20' 40.8" Y = 40° 04' 08.7"

Ջրահեռացում
X = 44° 20' 34.5" Y = 40° 04' 04.7"

*8. Ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները*

***Դրենաժային համակարգ՝ Հրազդան գետ***

25545.7818 հազ.մ$^3$/տարի, 69988.4 մ$^3$/օր, 810.0 լ/վ

*9. Արտահոսքի նկարագրությունը*

Կեղտաջրերի մաքրում չի կատարվում:

*10. Կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի տվյալները*

| | |
|---|---|
| ԹԿՊ$_5$ | - 2.50 գ/մ$^3$ |
| ԹՔՊ | - 15.35 գ/մ$^3$ |
| Կախ. մասնիկներ | - 23.30 գ/մ$^3$ |
| Քլորիդներ | - 30.45 գ/մ$^3$ |
| Սուլֆատներ | - 32.23 գ/մ$^3$ |

*11. Ջրերի ստանդարտները և(կամ) դրանց վերաբերյալ հրապարակումների տեղեկությունները*

Հ

*12. Հատուկ միջոցառումներ, որոնք կիրառվելու են արդյունավետ ջրօգտագործումը խթանելու և ջրի որակը բարելավելու, գերխոնավ և առափնյա կարևոր բնական միջավայրերը և առնչվող կենսաբազմազանությունը պահպանելու համար*

Մշակել և իրականացնել՝ ջրակորուստների կրճատման և նորմատիվային ջրաքանակի արդյունավետ օգտագործման միջոցառումների ծրագիր:

*13. Համապատասխան պահանջներ՝ ջրօգտագործման հաշվառման, մոնիտորինգի, գրանցման և ճշգրտման համար*

1. Ջրառի կետերն ապահովել ջրաչափական դիտակետերով, ջրաչափերով և սահմանված կարգով դրանք կապարակնքել:

2. Կատարել ջրօգտագործման հաշվառման աշխատանքներ և սահմանված կարգով Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին ներկայացնել 2-տա (ջրտնտ) տարեկան հաշվետվությունը:

*14. Համապատասխան երաշխիքներ՝ ջրային ռեսուրսներին վնասներ հասցվելու դեպքում*

ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների խախտման դեպքում փոխհատուցել հասցված վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

*15. Ջրօգտագործման թույլտվությանն առնչվող վճարներն ու վճարման ժամանակացույցը.*

1. Պետական տուրքի անդորրագիր N230418077769029-23-27576874

2. Բնօգտագործման և բնապահպանական վճարները կատարել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներով:

*16. Ջրօգտագործման թույլտվությունը գրանցված է պետական ջրային կադաստրում:*

Սույն ջրօգտագործման թույլտվությունը կազմված է երկու օրինակից:

*17. Խորքային հորի հորատմանը ներկայացվող պահանջները*

Սահմանվել է
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի N273Ն որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 0327367
Էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման
(Ինքնավար էներգաարտադրող-Բաշխող)

«27» 04 2022 թվական                                                    ք. ՄԱՍԻՍ

<<ՍԱԳԱՏԻ ՖԻՇ>> ՍՊԸ,
(իրավաբանական (ֆիզիկական) անձի անվանումը (անունը,ազգանունը, հայրանունը)
այսուհետ՝ Ինքնավար էներգաարտադրող, ի դեմս ՏՆՕՐԵՆԻ Ժ.Պ. Տ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ,
(իրավաբանական անձի դեպքում՝ ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը)
Գ.ՍԻՓԱՆԻԿ 20Փ.3.
(սպառման համակարգի միացման հասցեն)
ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից, և
<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ>>ՓԲԸ <<ԱՐԱՔՍ>>ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԱՍԻՍԻ ԷԼ. ՑԱՆՑ,
(ընկերության անվանումը)
այսուհետ՝ Բաշխող, ի դեմս ՊԵՏ՝ ՋՈՀՐԱԲ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ,
(ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը)
ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պայմանագրում կիրառվող հասկացություններն են.

| | |
|---|---|
| 1) Առևտրային կանոններ՝ | Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններ: |
| 2) Հանձնաժողով՝ | Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնա-ժողով, |
| 3) Ինքնավար էներգաարտադրող՝ | սեփական կարիքների բավարարման համար էլեկտրական էներգիա արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցում էլեկտրական էներգիայի իր սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կիլովատտը, իսկ արևային էներգիայի կիրառմամբ արտադրողների դեպքում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը՝ մինչև 500 կիլովատտը, |
| 4) Բաշխող՝ | Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ, |
| 5) Էլեկտրական էներգիայի փոխհոսքեր՝ | վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող Ինքնավար էներգաարտադրողի էլեկտրասպառման համակարգի անխափան աշխատանքը և գործունեության իրականացման անհրաժեշտ պայմաններն ապահովելու նպատակով Բաշխողի կողմից ապահովվող էլեկտրական էներգիայի փոխհոսքեր, |
| 6) Կանոններ՝ | Հանձնաժողովի կողմից հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններ, |

7) Հաշվարկային տարի՝ ժամանակահատված, որի գործողությունն սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին,

8) Հաշվարկային ամիս՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է Հաշվարկային տարվա յուրաքանչյուր օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է նույն ամսվա վերջին օրվա ժամը 24:00-ին:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Պայմանագրի համաձայն Ինքնավար էներգաարտադրողը իրավասու է էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակում Բաշխողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Բաշխողը պարտավոր է հատուցել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Կողմերը պարտավորվում են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Պայմանագրով, Առևտրային կանոններով, Կանոններով՝ եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով և Առևտրային կանոններով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:
4. Ինքնավար էներգաարտադրողը պարտավոր է.
   1) Բաշխողին մատակարարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N1925Ն որոշմամբ հաստատված էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված որակի էլեկտրական էներգիա.
   2) մասնակցել մատակարարված և հատուցման ենթակա էլեկտրական էներգիայի ծավալի հաշվարկին՝ ամսական և վերջնահաշվարկին՝ տարեկան արդյունքներով:
5. Ինքնավար էներգաարտադրողն իրավունք ունի ստանալ հատուցում մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:
6. Բաշխողը պարտավոր է.
   1) Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում հատուցել Ինքնավար էներգաարտադրողին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց.
   2) կատարել մատակարարված և հատուցման ենթակա էլեկտրական էներգիայի ծավալի հաշվարկ՝ ամսական և վերջնահաշվարկ՝ տարեկան արդյունքներով.
   3) Ինքնավար էներգաարտադրողի մոտ տեղակայել դարձափոխիչային (ռեվերսային) բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչ (հավելված N1): Հաշվիչի ձեռքբերման և սպասարկման հետ կապված հարցերը կարգավորվում են Կանոններով:

## 4. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԱՌևՏՐԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

7. Ինքնավար էներգաարտադրողի կողմից Բաշխողին վճարման ենթակա և Բաշխողի կողմից Ինքնավար էներգաարտադրողին հատուցման ենթակա էլեկտրական էներգիայի ծավալների հաշվարկը կատարվում է համաձայն Առևտրային կանոնների և հատուցման (վճարման) ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտի (հավելված N2):
8. Ինքնավար էներգաարտադրողի կողմից մատակարարված էլեկտրական էներգիայի ծավալը և մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց հատուցման գումարը տարեկան արդյունքներով հաշվարկվում են համաձայն Առևտրային կանոնների:
9. Առևտրային հաշվիչի ցուցմունքները գրանցում է Բաշխողը՝ տվյալ Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա առաջին երեք օրերի ընթացքում:
10. Հաշվարկային տարվա ավարտից հետո, մինչև Հաշվարկային տարվան հաջորդող տարվա հունվարի 25-ը, Բաշխողից հատուցում ստանալու համար Ինքնավար էներգաարտադրողը և Բաշխողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում են հաշվարկային փաստաթուղթ: Հատուցման դեպքում կիրառվող սակագինը որոշվում է համաձայն Առևտրային կանոնների:
11. Բաշխողը Պայմանագրի 10-րդ կետում նշված հաշվարկային փաստաթղթի հիման վրա հատուցվող գումարը փոխանցում է Ինքնավար էներգաարտադրողի բանկային հաշվեհամարին՝ Հաշվարկային տարվա ավարտից հետո մինչև Հաշվարկային տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

12. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:
13. Բաշխողի կողմից Պայմանագրի 11-րդ կետում նշված ժամկետի խախտման պարագայում Ինքնավար էներգաարտադրողը իրավունք ունի Բաշխողից պահանջել վճարելու տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

14. Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են Կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

15. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

## 7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

16. Պայմանագրի հետ կապված Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի առկայության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

17. Եթե վեճի առարկան Ինքնավար էներգաարտադրողին Բաշխողի կողմից հատուցվող գումարի չափն է, ապա Բաշխողը պարտավոր է վճարել հատուցվող գումարը, որից հետո միայն Կողմերը կարող են լուծել վեճը:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

18. Սույն գլխում Կողմերի կողմից սահմանվող այլ պայմանները չեն կարող հակասել Պայմանագրին, Առևտրային կանոններին, Կանոններին և այլ իրավական ակտերին:

____________________________________________________________

________________________________________________

________________________________________________

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

19. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:
20. Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր Կողմի համար:

21. Հանձնաժողովի կողմից Ինքնավար էներգաարտադրողի և Բաշխողի միջև էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում: Հանձնաժողովի սահմանած ժամկետում էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման նոր պայմանագիր չկնքելու կամ գործող պայմանագրում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ չկատարելու դեպքում գործում են Հանձնաժողովի կողմից հաստատված պայմանագրի նոր օրինակելի ձևի դրույթները կամ գործող օրինակելի ձևում կատարված փոփոխությունները կամ լրացումները:
22. Պայմանագիրը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

23. Պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ Պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

3. Սույն աղյուսակի 14-րդ սյունակը լրացվում է՝

1) 1 թվանշանով, եթե Ինքնավար էներգաարտադրողների էլեկտրամատակարարումն իրականացվում է 6 (10) կՎ և բարձր լարման 1-ից ավելի առանձին օդային կամ մալուխային գծերով կայանի կամ ենթակայանի երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից,

2) 2 թվանշանով, եթե Ինքնավար էներգաարտադրողների էլեկտրամատակարարումն իրականացվում է այլ կերպ:

| Ինքնավար էներգաարտադրող | Բաշխող |
|---|---|
| Տնօրենի ժպ. Տ.Թադևոսյան | Պետ՝ Զոհրաբ Թադևոսյան |
| (անուն, ազգանուն, իրավաբանական անձի դեպքում՝ պաշտոն) | (անուն, ազգանուն, պաշտոն) |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| 27 04 20 22 թվական | 27 04 20 22 թվական |
| Կ.Տ. (առկայության դեպքում) | Կ.Տ. |

«ՀԱՅԷԼԵԿՏՐԱՑԱՆՑ» ՓԲԸ «ԱՐԱՔՍ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ «ՄԱՍԻՍ» ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑ 01520882

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
հուլիսի 22-ի N 1201 - Ն որոշման

Ձև

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՑԱՄԱՔՈՒՐԴԱՅԻՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ) ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԵՏԱԴԱՐՁ ՋՐԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ

ՀՀ Արարատի մարզ, գյուղ Հայանիստ «07» ապրիլի 2022 թ.

<<Սագատի Ֆիշ>> ՍՊԸ-ն
(իրավաբանական անձի անվանումը և (կամ) ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը)

այսուհետ՝ օգտվող, ի դեմս տնօրեն՝ Տաթևիկ Թադևոսյանի,
(ազգանունը, անունը, հայրանուն, պաշտոնը)

որը գործում է կանոնադրության հիման վրա,
(կանոնադրության, լիազորագրի)

մի կողմից, և <<Մելիորացիա>> ՓԲԸ-ն այսուհետ՝ ընկերություն, ի դեմս
(շահագործող կազմակերպությունը)

ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող՝ Ա. Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրով ընկերությունը պարտավորվում է օգտվողին մատուցել սույն պայմանագրի 2-րդ կետում նշված ծառայությունները, իսկ օգտվողը պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների համար:
2. Ընկերությունը պարտավորվում է իրականացնել օգտվողի կողմից ջրթափից հետադարձ ջրերի անխափան փոխադրումը՝ իրականացնելով մաքրման,նորոգման և պահպանման աշխատանքները:
3. Ծառայությունների մատուցման ժամկետն է՝ 07 ապրիլի 2022թ.-ից մինչև 07 ապրիլի 2025թ.:

4. Ցամաքուրդային (դրենաժային) համակարգերի միջոցով փոխադրված հետադարձ ջրերը հաշվառվում են օգտվողի կողմից սահմանված կարգով ստուգաչափված, տեղադրված և կապարակնքված ջրաչափական սարքի (սարքերի) ցուցմունքին համապատասխան: Ջրաչափական սարքի խափանման և (կամ) բացակայության դեպքում փոխադրվող փաստացի ջրաքանակը հաշվառվում է ջրթափի կետում հետադարձ ջուրը փոխադրողի և օգտվողի համատեղ չափումների հիման վրա:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Օգտվողն իրավունք ունի՝

1) սույն պայմանագրին համապատասխան անարգել ընկերության կողմից շահագործվող ցամաքուրդի (դրենաժի) միջոցով փոխադրելու արտադրական տարածքում առաջացած հետադարձ ջրերը.

2) տեղեկանալու ընկերության կողմից շահագործվող օգտվողի հետադարձ ջրերը տեղափոխվող ցամաքուրդի (դրենաժի) մաքրման աշխատանքների արդյունքների մասին՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

6. Ընկերությունն իրավունք ունի՝

1) անարգել մտնելու օգտվողի արտադրական տարածք՝ ջրաչափական սարքի ցուցմունքը կամ ջրաչափությունը համատեղ արձանագրելու համար.

2) օգտվողից պահանջելու սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում նախատեսված վճարները:

7. Օգտվողը պարտավոր է՝

1) մատուցված ծառայությունների համար վճարել սույն պայմանագրի 4-րդ կետին համապատասխան հաշվառված փոխադրված հետադարձ ջրի ծավալների և 9-րդ կետում նշված վճարի արտադրյալին համապատասխան, սույն պայմանագրի 11-րդ կետին համապատասխան համատեղ կազմված փոխադարձ ակտի կազմմանը հաջորդող 15 օրացույցային օրվա ընթացքում.

2) թույլատրել ընկերության ներկայացուցչի մուտքն իր արտադրական տարածք՝ ջրաչափական սարքի ցուցմունքը համատեղ արձանագրելու կամ ջրաչափություն իրականացնելու համար:

8. Ընկերությունը պարտավոր է՝

1) յուրաքանչյուր տարին առնվազն մեկ անգամ, սահմանված կարգով, ապահովել ցամաքուրդի (դրենաժի) մեջ արտանետվող հետադարձ ջրերի կենսաբանաքիմիական կազմի լաբորատոր հետազոտության իրականացումը.

2) իր կողմից շահագործվող ցամաքուրդ (դրենաժ) ընդունել օգտվողի կողմից փոխադրված ջրաքանակները.

3) պահպանել օգտվողի կողմից կառուցված ջրթափի միջոցով ՀՀ Արարատի մարզի Սիփանիկ համայնքի << [illegible] >> ցամաքուրդի (դրենաժի) տեխնիկական վիճակը.

4) հետադարձ ջրերը փոխադրել ամբողջ ծավալով.

5) օգտվողի պահանջով վերացնել հետադարձ ջրերը տեղափոխվող ցամաքուրդի (դրենաժի) հետ կապված և հայտնաբերված բոլոր թերությունները:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման գինը 1 $մ^3$-ի հետադարձ ջրերի տեղափոխման համար սահմանել 0.11 դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

10. Օգտվողի կողմից ընկերությանը ենթակա վճարի չափը հաշվարկվում էամսվա ընթացքում հետադարձ ջուրը փոխադրման կետից ցամաքուրդ (դրենաժ) արտանետված փաստացի ջրաքանակի և սույն պայմանագրի 9-րդ կետում նշվածգնի արտադրյալին համապատասխան:

11. Ցամաքուրդ (դրենաժ) փոխադրված փաստացի ջրաքանակն արձանագրվում է օգտվողի և ընկերության կողմից համատեղ կազմված փոխադարձ ակտի հիման վրա՝ յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա մինչև 15-ը:

12. Օգտվողի կողմից ընկերությանը վճարման ենթակա գումարը վճարվումէ սույն պայմանագրում նշված ընկերության հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

13. Սույն պայմանագրի 3-րդ կետում նշված ժամկետում ծառայություններ չմատուցելու դեպքում ընկերությունն օգտվողին վճարում է տուգանք՝ պայմանագրի ամսական գնի 5 տոկոսի չափով, և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով:

14. Սույն պայմանագրի 10-րդ կետին համապատասխան հաշվարկված վճարի չափը սույն պայմանագրի 7-րդ կետի 1-ին ենթակետում նշված ժամկետումչվճարելու դեպքում օգտվողն ընկերությանը վճարում է տուգանք՝ պայմանագրի ամսական գնի 5 տոկոսի չափով, և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով:

15. Տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

## 5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

16. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթեդա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

## 6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

17. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցու-թյունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը ենթակա են լուծման դատական կարգով:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Օգտվողն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրն իր արտադրական տարածքից առաջացած հետադարձ ջրերի բացակայության դեպքում՝ առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով ընկերությանը:

19. Ընկերությունն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը օգտվողի կողմից երկու ամիս անընդմեջ պայմանագրային պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև ընկերությանը պայմանագրով սահմանված իր իրավունքներից օգտվելուն խոչընդոտելու դեպքում՝ առնվազն երկու ամիս առաջ գրավոր ծանուցելով օգտվողին:

20. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ կողմերի կամ կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

21. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Օգտվող | Ընկերություն |
| --- | --- |
| <<Սագատի Ֆիշ>> ՍՊԸ | «Մելիորացիա» ՓԲԸ |
| ՀՀ Արարատի մարզ, Սիփանիկ համայնք | Արարատի մարզ, գ. Հայանիստ Էջմիածնի փ. 22 |
| (գտնվելու վայրը) | (գտնվելու վայրը) |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 2472904249330000 | Հ/Հ 2474602666500000 |
| (բանկային վավերապայմանները) | (բանկային վավերապայմանները) |
| Տ. Թադևոսյան | Ա. Ղազարյան |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ՔԱՂՎԱԾՔ

Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից առ՝ **2023-08-24**-ը:

## «ՍԱԳԱՏԻ ՖԻԾ»
## Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | **77.110.64490** |
| Հիմնադրման տարի | **2012** |
| Գրանցման ամսաթիվ | **2012-01-30** |
| Գործունեության ժամկետ | **Անժամկետ** |
| Ստեղծման եղանակ | **Հիմնադիր(ներ)ի որոշում** |
| Կարգավիճակ | **Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:** |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | **41519125** |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | **03812527** |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | **06114490** |
| Էլ. փոստ | - |
| Կայք | - |

**Գտնվելու վայրը**

| | |
|---|---|
| Հասցե | **- / Շ / - ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 0822 ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ԱՐԱՐԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ** |
| Հեռախոս | **096-50-55-83** |

**Գործադիր մարմնի ղեկավար**

| | |
|---|---|
| Պաշտոն | **Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար** |
| Անուն Ազգանուն | **ՏԱԹԵՎԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆԻ** |
| Անձնագրային տվյալներ | **AU0476827 2021-10-28 044** |
| Հասցե | **ԽԱՂԱՂ ԴՈՆԻ Փ. / Շ / 19/1 / 36 Բ [illegible]ԵԲՈՒՆԻ [illegible]0 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ** |

ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

| | |
|---|---|
| ՀՀ Առողջապահության նախարարություն | Ձև N 1<br>Հաստատված է ՀՀ առողջապահության նախարարի<br>« 04 » հոկտեմբերի 2012 թ.<br>թիվ 2252-Ա հրամանով |
| Հետազոտություն կատարող կազմակերպության անվանումը՝ ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղ | |

« 16 » 05 2023

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 92/40

« 16 » 05 2023 թ.

Ջրի քիմիական հետազոտության

Հայտատու կազմակերպության անվանում «ՍԱԳԱՏԻ ՖԻՇ» ՍՊԸ

Նմուշառման վայրը, հասցեն Արարատի մարզ, գ. Սիփանիկ

Սկզբնաղբյուրի անվանումը խորքային հոր

Նմուշառման ամսաթիվը, ժամը 10.05.23թ.

Նմուշի լաբորատորիա ընդունման ամսաթիվը, ժամը 10.05.23թ.

Նմուշառման արձանագրության համարը, ամսաթիվը 10.05.23թ.

Լրացուցիչ տեղեկություններ Նմուշը ներկայացվել է պատվիրատուի կողմից, հետազոտությունները իրականացվել են նշված ցուցանիշների նկատմամբ

| Ցուցանիշներ | Չափման միավոր | Հետազո-տության արդյունք | Սահմանային թույլատրելի խտություն (ՍԹԽ) ոչ ավել, | Հետազոտման մեթոդի ՆՏՓ |
|---|---|---|---|---|
| Ջրածնային ցուցանիշ | PH միավոր | 6,78 | 6-9 սահմաններում | ՀՍՏ ԻՍՕ 10523-2011 |
| Պերմանգանատային օքսիդացում | մգ O/դմ3 | 2,4 | 5,0 | ԳՕՍՏ Ռ 55684-2013 |
| Նիտրատներ (ըստ $NO_3^-$) | մգ/դմ$^3$ | 17,93 | 45,0 | ԳՕՍՏ 33045-2014 |
| Ամոնիում իոն ($NH_4^+$) | մգ/դմ$^3$ | չի հայտն. | 2,0 | ԳՕՍՏ 33045-14 |
| Նիտրիտներ ($NO_2^-$) | մգ/դմ$^3$ | չի հայտն. | 3,0 | ԳՕՍՏ 33045-14 |
| ԹՔՊ | մգ O /դմ$^3$ | 4,2 | 30 | ՀՍՏ ԻՍՕ6060-08 |

Հետազոտություն կատարող(ներ)–ի պաշտոնը, անունը, ազգանունը և ստորագրությունը

քիմիկներ՝ Ա. Մախսայան

Լաբորատորիայի վարիչի անունը, ազգանունը և ստորագրությունը Ե. Հախվերդյան